Տ. ԻՍԱՀԱԿ ԱԲԵՂԱ ՊՈՂՈՍՅԱՆ

(ավազանի անունը՝ Անդրանիկ)

Ծնվել է 1978 թ. նոյեմբերի 20-ին Երևանում:

1985-1995 թթ. սովորել և ավարտել է Դ. Դեմիրճյանի անվան № 27 միջնակարգ դպրոցը:

1991-1993 թթ. հաճախել է Երևանի № 66 դպրոցում գործող կիրակնօրյա հոգևոր դասընթացներին:

1992 թ. գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի № 17 երաժշտական ստուդիայի ակորդեոնի բաժինը:

1996-2001 թթ. ուսանել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

Հնգամյա դասընթացն ավարտելուց հետո, 2001-2002 թթ. ուսումը շարունակել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2002 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Մտեփաննոս Նախավկայի տոնին, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Գերաշնորհ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի:

2002 թ. հուլիսի 8-ից ծառայության է անցել Մայր Աթոռի Տնտեսական բաժնում, որպես օգնական-քարտուղար:

2003 թ. հունվարի 3-ից տեղափոխվել է Մայր Աթոռի Մատակարարման բաժին:

2004 թ. հունվարի 17-ին պաշտպանել է «Վարագավանքը հայ հին գրականության համապատկերում» վերտառությամբ ավարտաճառը:

2005 թ. փետրվարի 3-ին Ս. Էջմիածնի Մայր Տաճարում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Գերաշնորհ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի: